ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի մարտի 5-ի թիվ 70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԹԱԹՈՒԼԻ Թ. ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմանբ հաստատված N 1 հավելվածի 20-րդ կետով, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2026 թվականի մարտի 6-ից Հարություն Արշալույսի Մխիթարյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Թաթուլի Թ.Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով 2023 թվականի սեպտեմբերի 27-ի N 13 աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Թաթուլի Թ.Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները ժամանակավորապես դնել «Թաթուլի Թ.Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էլիզա Նահապետյանի վրա:

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 3/6/2026 11:44:08 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. մարտի 5
ք.Աշտարակ